

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Փոփոխում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտար քաղաքացիք գինում են ուղղակի
Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաջօրեան 10—2 ժամ:

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն կողմով:

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՔՆՆԱԿԱՆՆԵՐԸ ԼՐԱԳԻՐ 1878 թ-ից

ՀՐԱՏԱՐԱՎՈՒՄ Է ԼՄՆՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերէն:

Լրագրի գինը և պրոգրամման նոյն են մնում: Մենք ստանում ենք ՍԵՓԵՎԿԱՆ ՀԵՌԵՎԱՆԻՆԵՐ: ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՍԱՆ մէջ:

ԼՄՆՆԶԻՆ ՀԼՄՆՆՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է դիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция «Мшакъ».

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻՒԿԱՌԻՒՆԸ

Գազի լուսաւորութիւնը: Ներքին տեսու-
թիւնը, Նամակ Եւրոպայի, Նամակ Բայանդուրից:
Նամակ Բայ Եւրոպայից: Ներքին լուսու-
րութիւնը տեսութիւնը: Տեղաբնակների
հաւատարմատարները: Փոխաբերաբար: Գր-
մանիս: Նամակ Գերմանիայից, Արտաքին լու-
րութիւնը: Սառն լուսուրութիւնը: «Մշակի» հեռագրիները:
— Յայտարարութիւնները: — Տեղեկացոյց:

ԳԱԶԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ

Այս օրերս մեր ձեռքը հասաւ
պ. Բօկլէվսկու Մօսկվայում ար-
պած ռուսերէն բրօշուրը գազի
լուսաւորութեան մասին (О СВЪ-
ТИЛЬНОМЪ ГАЗЪ ТОВАР. НЕФТЯ-
НАГО И НЕФТОВОДОР. ГАЗ. ОСВ.):

Մօսկվայում հիմնված գազի
լուսաւորութեան ընկերութիւնը
պատրաստում է գազ նաւթից,
թէ լուսաւորութեան և թէ վա-
ռելու համար: Այդ ընկերութե-
ան պատրաստված գազն առի-
թով պ. Բօկլէվսկի հրատարակել
է ներկայ թիւին մի բրօշուր, որի
մէջ մանրամասն կերպով քննում
է լուսաւորութեան զանազան մի-
ջոյնները:

Այս լուսաւորութեան կարծ
պատմութիւնը: Առաջ մարդիկ
իրանց բնակարանները լուսաւո-
րելու համար գործ էին ածում
ձարաբային պինդ օրգանական նիւ-
թեր, թէ կենդանիներից և թէ
բոյսերից վերցրած: Յետոյ մար-
դիկ սկսեցին գործածել աւելի
թեթեւ կամ հեղուկ օրգանական
նիւթեր իրանց բնակարանները և
քաղաքների փողոցները լուսաւո-
րելու համար: Այդ նպատակով վերջին

ժամանակ բոլոր լուսաւորելու նիւ-
թերի տեղ բռնել է գազը:

Ազգեցի բնահամար գործածա-
կան գործել էր քարածուխից հա-
նած գազը, բայց այժմ այդ նիւ-
թից ստացվող գազը փոքր առ-
փոքր յետ է մնում գործածութե-
անց և նրա տեղը, քարածուխի
թանգութեան պատճառով, բռն-
նում է նաւթային գազը:

Բրօշուրը մանրամասն քննում
է նաւթից հանած գազի գերա-
զանցութիւնը: Նրա բոցը սպի-
տակ է և աւելի զուրեկան է
աչքի համար, լուսաւորութիւնը
աւելի մեծ ոյժ ունի քան թէ
քարածուխի գազը, չէ ձայնում
այդ վերջինի պէս, աւելի էժան է
ստանում, և այլն...:

Եթէ մեր քաղաքը դիտուե-
րութիւն ունի մոցնել մեզ մօտ
գազի լուսաւորութիւնը, խորհուրդ
կը տայինք մեր քաղաքային Ապ-
րովային ուշադրութիւն դարձնել
Բօկլէվսկու բրօշուրի վրա և աչքի
առաջ ունենալ նաւթային գազի
լուսաւորութեան Մօսկվայի գոր-
ծարանը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՅ

18 յունիսի

Մի կողմից նայելով այն ամպերին, որ կար-
ծես բնութիւնը սանձանել է միշտ պաշարման
մէջ պահել Եւրոպայի միւս կողմից այստեղի ծա-
գած անտեղի խոտիկութիւնները աչքի առաջ ու-
նենալով, մօտ օրերս ամենք մի մեծ փոթորիկի

էին սպասում: Այդ փոթորիկը ամպերից ցած կը
գար մեր քաղաքը, թէ քաղաքից կը բարձրա-
նար և ամպերի մէջ կանչեալանար, դեռ ոչ օրի
յայտնի չէր, մինչև որ ամսիս 15-ին մթնոլորտը
պարզվեցաւ և այդ պարզութեան մէջ Եւրոպայի
անկախութեան եղաւ այն առաջատար տար
սայլին, որ իր իրականութեամբ հեռացաւ Եւրոպայի
անկախութեան իր մէջ տանելով ռուսականացի պաշ-
տօնական կերպով արձա լիւծ հինգ մասնիկ ա-
վարժ ռուսացիներից երեքը, որոնց շնորհիւ և
մի քանի շահախնդիր անձանց, մեր խեղճ զբոյ-
րոցը խոտիկութեան անպարէզ զանաւորուցիլ զատ,
նիւթական և բարոյական վնասներ, ես նիւթակի-
վեցաւ. Բաւական չէր գնացողները սերմանած
որոշմանը, սոր մը երկու որոշմանցաներ ևս լոյս
ընկան, որոնք չափազանց ազատութիւն տուին
իրանց գրչին և հրատարակաւորութեան, ամեն
մի շնչին բան խոչընդոցով ներկայացրին, չը
հեռատեսելով որ ռուսականացիներն անտեղեկ
անձինք քանի քանի տեսակ կարծիքներ կարող
են հետեւեցնել և ով գիտէ ինչ վատ դատաւար-
ներ կուենան մեր Եւրոպայի հատարակութեան վրա
և թէ ինչպէս կը վրդովի տեղիս ժողովուրդը:

Միթէ արժէր անխտիր անպատուութիւններ
ուտեցնել մեր քաղաքացիներին, միթէ նոքա
մարդկային զգացմունքից զուրկ են. միթէ շու-
չեցիները դէպի իրանց անպատուութիւնը ան-
տարբեր մնալով, նրանց միամտութեանը կը հե-
տեւեն, ճշմարիտն ասած Եւրոպայի բաւականին անյի-
շաշարութեամբ է վարվում, միայն իրան պատուի
համար: Թող լաւ գիտենան խոտիկայոցը, որ շու-
չեցիները համբերութեան ևս մի սանձան կայ,
նրանց խայտոցը գրչի խայտոցից սակի սուր է
և նրա հասցրած վերքը անբուժելի...:

Խոտիկայոցները միայն նրանով կարող են պար-
ծենալ, որ իրանց հանած խոտիկութեան առթիւ,
ժողովուրդը իր ուշադրութիւնը դարձրեց զբոյ-
րոցի վրա. այս գովելի յատկութիւնը դժբաղ-
դաբար մինչև այժմ միայն մի քանի անձանց
մէջ հաղւել էր նմարվում:

Անցեալ օրը լսեցի թէ հայր Ազգրակեանի
այստեղից արձակելու համար մի քանի որոշմա-
ցան խնդիր են պատրաստել և բանի ստորագրել
են տալիս դաւաքներին, դերձակներին, դար-
բններին և ուրիշ արձանատուներին. այս բա-
նին չէի հաւատայ, եթէ անձամբ չը ստուգէի
մի ծանօթ վաճառականից, որին պատահելով
հարցնում եմ՝ ինչ նոր բան կայ բազարում. նա
պատասխանում է ժողովուրդը. «Եթէ գիտեմ չըս
հինչ կայ, էսոր անցի կենում բազարից, մին էլ
տեսնում միս խիլայ մարթ թուփ դեռած կընչե-
ցին, թա զօնչի, քամատայ մին եկ դու էլ էս
թողթին ձեռք քաշի է, ես էլ քեցի ձեռք քա-
շեցի»: Թիչ թուփ էր նորից հարցնում եմ. «վա-
լա՛ւ ըսեցին թա վրթըպեանին դիւս քեցիլու մը՝
հար ա՛: է՛հ վարդապետը ինչ ա արել. Վեսինչ
գիղամ, էրկու հարիւր մարթ ձեռք ա դրալ, բան
էս նրան տեղան ա, հարթաթ մին զատ ըրալ ա
որ ըստընեց ձեռքը դնում...» չեչտելով ասում
է պարոնը. Սրանից կարելի է հետեւեցնել թէ
ինչպէս միամիտ ժողովուրդը խաբված է մի եր-
կու խոտիկով ազգասէր անձինքներից և ինչ բա-
ների ետեւից են մեր ճշմարտութեան գոհ
գնացած և պարոնները...:

Այս քաղաքից դէպի ամպերը բարձրացող փո-
թորիկն էր, որի վախճանը դեռ անորոշ է մնա-
ցած. այժմ խօսենք ամպերից քաղաքը իջնող
փոթորիկի համար:

Ամսի 18-ին ցերեկվայ ժամի 1-ից սկսեց այս-
տեղի սովորական անձրեւը, բայց մի րօպէլ չան-
ցած, անտեղաբական փոթորիկացաւ, որովհետեւ
անձրեւը կարկտախառն էր, որով ոչ սակաւ վնաս-
ներ տուեց քաղաքին. մի քանի տներ փլան,
չատ ապակիներ փլուզեցան, թրթուրից ազատ
մնացած պտուղները և տերեւները թափվեցան,
չատ ներքնատները ջրով լցվեցան և մի քանի
կենդանիներ խեղդվեցան: Ընդհանուրի վնասը
այնքան էլ մեծ չէ, շնորհիւ մեր պառու կանանց
արած գործողութիւններին, որոնք եթէ չը լինէին,
դեռ ևս կարկուտը երկար ժամանակ կը շարու-
նակէր իր հարուածները. Արովհետեւ մեր նախա-

պաշարմունքով բռնված պառուներն են, որ կար-
կուտի ժամանակ կանկարանքը տօնըրը դէպի եր-
կինք ցցած դուրսը կը դնեն կամ եօթ հատ կար-
կուտ կը կարեն դանակով. մի քանիսները կար-
կուտը կաղանձեն, կամ աղ կը ցանեն. աւելի
բարեպաշտները ծնկաչոք կարծիքն և ամեն մի
որոտալու և կայծակ արձակելու ժամանակ տասն
և հինգ անգամ երեսները իտալ կը հանեն, եր-
կինքը զիջաւ նրանց աղաչանքներին ու շուտով
երկինքը պարզվեց թէ չէ, անկից զուրս թռան
չուշեցիք թ օ փ ի ս ան ան, սկսեցին իրանց վնաս-
ները մէկ մէկու ասել. անձրեւը և կարկուտը
զովելով: Այս միջոցին ապակի ձգող վարպետ
Ավանը, զրոյցից ցաւակցութիւն ցոյց տալով,
ներսից հողով չափ ուրախացած, նեղ փողոց-
ների մէջ ձի՞ծաղը բեկերի տակից ծըծալով ա-
պակիները կենտասկին մի տանից միւսն էր
մտնում...:

Փառք Աստուծու, անցան երկու փոթորիկները,
յոյս ունենք որ երկար ժամանակ քաղաքը չի
ենթարկվի երկու միմեանց հակառակ փոթորիկ-
ներին:

Ղազանչիցի

ՆԱՄԱԿ ԲԱՅԱՆԳՈՒՐԻՑ

24 յունիսի

Այս անգամ կամենում եմ ծանօթացնել բն-
թեցողին Բայանդուր գիւղի հետ:

Այս գիւղը Ալեքսանդրապոլից համարեա 10
վերստ հեռավորութեամբ գտնվում է Ախուրեան
գետի ափում. բազմաբնակ է 50 տուն յոյն և 70
տուն հայ ազգանաւ տեղեկից գաղթած բնա-
կիչներից: Հայերի և յոյների յարաբերութիւնը
միմեանց հետ չատ վատ է: Թէ հայերը և թէ
յոյները չեն ունեցել մինչև այսօր ռուսական
և չեն մտածում ունենալ, և այդ պատճառով խո-
րին աղիտութեան մէջ են: Այն բոլոր պակա-
սութիւնները, որոնց ես «Մշակի» նախընթաց
համարներում հրատարակեցի, այստեղ աւելի
ընդարձակ և աւելի ծաղկած են երևում:

Բոլոր բնակիչները, որոնք երազներումն էլ ձի,
կով, եղ, սայլ... էլին տեսնում, այժմ ներկայ
պատերազմի շնորհիւ, հարուստ են և ամեն բան
ունեն: Այս գիւղում կայ երկու հոյակապ և
փառաւոր եկեղեցի, բայց չատ զատալի է, որ
հայերի եկեղեցու կաթուղիկէն տաս տարուց
աւելի է, որ այնպէս զուրկ բաց արեքանակի
տակ ձեռնեցում է: Այն, հայերը առանց ամա-
չելու եկեղեցիների կաթուղիկէի բաժինը հին
ցնցոտիներով, փթած փայտերով, երկրագործա-
կան գործիքներով են ծածկել, ցեխապատ արել
և եօլա են գնում. եկեղեցու ներսը նայնպէս
չատ կարեօր հոգալիքներ կան և թերութիւն-
ներ, բայց ուշադրութիւն դարցնող չը կայ: Եթէ
իւրաքանչիւր տուն միայն 10 ռուբլ գոհելու
լինի, բոլոր պակասութիւնները կը լրանան և
ամբողջ Երեւանի մէջ առաջինը կը լինի իր վա-
րելուց կազմվածքով, իր գեղեցիկ դիրքով և ձե-
ւով: Բայանդուրը լինելով ռուսաց և տաճկաց
սանձանազուրկ, միշտ ոտնակոխ է եղել երկու
կողմի արշաւանքներին: Նա տեսել է չատ պա-
տերազմներ, և կրել է անթիւ վնասներ բարբա-
րուս թիւրքերից: Նա լուս համբերատար է եղել
երբ անգութ թիւրքերը անցեալ պատերազմներին
քանդում էին իր եկեղեցին, այրում էին տները,
խոտերը, կալուածքները. նա միայն ողբում էր,
երբ երկնախնային օրորոցի մէջ կորստում էին,
Բայց գոհութիւն Արարչին, այս անգամ Բայան-
դուրը ազատ մնաց այս տեսակ պատահարնե-
րից: Այս գիւղը ունի երկու քահանայ, որոն-
ցից մէկը իր ուսումը ասարեւել է կառնու
զպրոցում, իսկ միւսը—Տէր-Գ., որ կարծում է
թէ ժամադրեց ու Աւետարանից բաց, էլ ու-
րել զիրք չը կայ աշխարհում, իր ուսումը ասար-
եւել է Եփրեմեանց տիրացու Մուկուչի մօտ, բայց
վկայականը ստացել է Մասնանց Մուկուչեանից:
Տէր-Գ-ի գլխաւոր պարապմունքն է, սանձուկ,
զվնացաւի, անուկ կանանց... գիր անել, գարի

«Օրգայական լեռներում» ապստամբութիւնը դեռ բոլորովն չէ զսպարմած: Լեռները ծածկված են պատերազմի փակասականներով: Տերեր, կանայք և երիտասարդներ, որոնք վերաւորված կամ հիւանդ են և ամեն բանից զուրկ մնացած:»

ԱՆԳՆԻՒՍ

Անդրկական միմիտրութեան կողմից պարլամենտին ներկայացված վերջին կապիտանտարակի մէջ հրատարակված է հայոց լինդրի վերաբերութեամբ հետեւեալ հետազոտութիւնը որ ըզր Սալսբերի մայիսի 11-ին ուղարկել է Կ. Պոլսում անդրկական դեսպան պ. Լայարդին:

«Պարոն. Քիւրքիայի հայերի նախկին պատրիարք և Տարսիս արքեպիսկոպոս գերապատիւ Սկարիս Եպիսկոպոս երէկ եկաւ ինձ հետ տեսակցեցաւ: Եր այնքան թեան նպատակը այն էր որ կոնգրէսը ի նկատի ունենայ և հայերի շահերը, և միջոցներ գործարդէ հայերի համար մի լաւ կառավարութիւն հաստատելու և իրանց ապահովեցնելու համար քուրքերի հարստահարութիւններին և բռնութիւններին դէմ: Մասնաւորապէս յայտնեց ինձ թէ Բ. Կրան դէմ թշնամութեան ոգով չէ խօսում և թէ իր ժողովուրդը դիտաւորութիւն չունի բաժանելու օսմանեան կայսրութիւնից: Հայաստանում գտնված թուրքերն էլ հաւասարապէս հարստահարվում են անօրէն քրքիւրը: Եւ նրան յայտնեցի նորին մեծութեան թագուհու կառավարութեան անկեղծ համակրութիւնը հայ հասարակութեան վրա և ապահովագրի նրան թէ ջանք կանխել լաւացնելու համար իրանց կրթութիւնը, բայց հարկաւոր չը համարեցի խօստւածներ տալ կոնգրէսի կողմից գործարդվելու մասնաւոր միջոցների վերաբերութեամբ:»

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայում ժողովուրդը սաստիկ զբաղված է պարլամենտի նոր անդամների ընտրութեան գործերով: Այդ շարժումից երեւում է որ հասարակական կարծիքը մեծ նշանակութիւն է տալիս իշխան Բիսմարկի արած հրահրելու Ազգային-ազատական, առաջադիմական, գերմանական պահպանողական և կայսերական կոչված կուսակցութիւնները արդէն հրատարակվել են իրանց ընտրողական շջաբերականները: Չայրայեղ կուսակցութիւններն էլ անդալաեանականները (ultramontan), յետադէմ—պահպանողականները և սոցիալականները հետզհետէ հերթով կը հրատարակեն իրանց շջաբերականները: Հրատարակված բոլոր շջաբերականներն էլ միաձայն պնդում են թէ հարկաւոր է մի թուգը դնել առկալարական սոցիալականութեան դէմ որ պատահաւ են համարում կայսրի կանցիլի դէմ փորձված դաւաճանութիւններին: Նրանցից մի քանիսը պահանջում են բացարձակ վստահութիւն կառավարութեան վրա և բովանդակում են իրանց ցանկութիւնները այս բառի մէջ՝ «Բիսմարկի առանց քերականներին: Մի քանիսն էլ խոստանում են կառավարութեան ազգու կերպով օգնել սոցիալականութիւնը ձնչելու համար, բայց շատ զգուշութիւններ են անում որ սահմանադրական օրէնքների ամբողջութիւնը պահպանվի, որովհետեւ առաջիկայ ընտրութիւնները յետոյ պարլամենտին հաստատելու օրէնքները երեք տարի կը տւեն և այդ պարլամենտը, բացի սոցիալական հարցը, պէտք է վճռի ուրիշ շատ գլխաւոր հարցեր որոնք դեռ դուրս չեն եկած կանցիլիի դրած քառանկից:

Այս քաղցիս, դեռ բաւականին դժուար է գուշակել թէ որ կողմը աւելի կը յաջողի ընտրութիւնների մէջ: Ամբողջ ազատական

մամուլը միաձայն պնդում է թէ հարկաւոր է պարլամենտի անդամ ընտրել այնպիսիներին որոնք անկեղծօրէն պաշտպան են սահմանադրական օրէնքներին: Այս կողմից, կառավարութեան կուսակցից լրագրիւնները սաստիկ և շատ անգամ յարձակվում են ազգային ազատական կուսակցութեան և մասնաւորապէս նրա ամենանշանաւոր անդամների վրա և թերեւս ուզում են հասկանցնել ընտրողներին թէ միշտ վստահաւոր է փոփոխել փորձված առաջնորդներին:

ՆԱՍՍԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅՑ

Բերլին, 27 յունիսի 78

Եթէ կոնգրէսի անդամները ճշմարիտ դիտաւորութիւն ունենան գաղտնի պահել նիտոտերի բովանդակութիւնները, այդ նպատակը ամբողջութեամբ կամ կատարելագոյն չէ ապովել: Ինչպէս է պատահում, այդ ի հարկէ հետազոտել անկարելի է, բայց իրողութիւն է, որ զանազան մասնաւորապէս հասել են լրագրութեանը և ուրեմն ամբողջ հասարակութեան ակնաչին—որովհետեւ լրագրութեան պաշտօնն է որքան կարելի է հետաւոր և շատ տարածել ամեն ինչ, որի մասին նա կը տեղեկանայ—ժողով չէ նրան այդ տեղեկութիւնները ճիշդ են, թէ կասկածի պիտի ենթարկվեն: Բայց այն լուրերը որ այժմ տարածված են կոնգրէսի վերջին նիտոտերի հետեւանքների մասին, ինչպէս երևում է ստոյգ են: Լրագրիւնները հաղորդում են այն իրողութիւնը, որ Բոլզարիայի հարցը արդէն վերջացած է և նոյնը հաստատում են ճիշդ տեղեկութիւններ ստացող շքրջաններն էլ, Հարցը հետեւեալ վիճուք ստացաւ: Բոլզարիան երկու մասն կը բաժանվի. մինը Բալկանի հիւսիսային մասն կը բռնի, բայց կանցնի և դէպի հարաւը ամփոփելով և Սօֆիայի սահմանը: Այս երկիրը Բոլզարիա իշխանութիւն անուն կը կրի. միւս, հարաւային մասը, թէ է և ինքնավարութիւն կը ստանայ, բայց կը համարվի Թիւրքիայի մի նահանգ և ըզր Բիլկոսիֆլիսի առաջադրութեամբ արեւելեան Բուլղարիա կանուանվի: Բոլզարիայի բոլոր ամրոցները թէ Կոստանայի, թէ Բալկանի վրա պիտի քանդվեն: Մասնաւորապէս ի հարկէ սահմանները որչափ չեն—դա կօնգրէսը կը յանձնի մի առանձին մասնաժողովին, որ նոյն իսկ երկիր մէջ կը պարտալի այդ հարցով:

Կարծիք կայ որ կողմ նիտոտերի մէջ կօնգրէսը կը զբաղվի Բօսնիայի, Հէրցեգովինայի, Չէրնօ-գորիայի, Սերբիայի, Բուլղարիայի և Յունաստանի հարցերով: Ինչ որ առաջին չորս երկիրներին է վերաբերվում լրվում է, իբր թէ Աւստրիային է յանձնված այս երկիրների ներկայացուցիչների հետ որոշել որքան իրաւացի և իրագործելի են նրանց պահանջները: Այսպէս նախապատրաստական կերպով շարժուց յետոյ միայն հարցը պիտի ներկայացվի կօնգրէսին: Ամեն կողմից լրագրութիւն է այն կարծիքը, որ Աւստրիան ժամանակաւոր (?) կերպով իր գործերը կը մտցնի Բօսնիա և Հէրցեգովինա և ինչպէս երևում է կօնգրէսի կամ Եւրօպայի թղթաւթութեամբ և անունով պիտի կատարէ այդ: Բայց թիւրքիայի կողմից այս առիթով այնքան մեծ դժգոհութիւն կայ, որ դուրսէ այժմ Աւստրիայի և Թիւրքիայի մէջ պիտի ծագեն դժուարութիւններ, որոնց հետեւանքը դեռ ևս անկարելի է նախազուգահեռ: Յունաստանի պահանջները կանդիայի և Էպիւրոսի վերաբերութեամբ ինչպէս երևում է նոյնպէս կօնգրէսի մէջ մեծ պաշտպանութիւն պիտի ստանան—և նոյնպէս թիւրքիայի կողմից դժգոհութեան առարկայ պիտի լինեն: Լրվում է մինչև անգամ, որ երբ կօնգրէսի մէջ որոշվեցաւ յունական հարցի վճարելու ժամանակ Գունաստանի ներկայացուցիչներին թող տալ նիտոտերին մասնակցելու, թիւրքիայի պատգամաւորները յայտնեցին, որ եթէ յոյները կը բարձրացնեն կանդիայի հարցը, իրանք պէտք է կօնգրէսից հեռանան: Բայց այս հեռանալու սպառնալիքը քանի անգամ կրկնվելուց յետոյ, այլ ևս ցանկացած աղբեղութիւն—մի ճնշումն գործել կօնգրէսի վրա—չէ ունենում:

Այստեղի լրագրիւնները ամեն անգամ երբ կօնգրէսը նիտու ունի, նոյն երկիրը բերում են դաւանական սպառնութիւններ, թէ ինչպիսի կառքի մէջ ինչ հազուատով, ինչ տրամադրութեան մէջ եկել է պատգամաւորներից ամեն մէկը—դուրս համար լրագրիւնների աշխատակիցները ի հարկէ փողոցի վրա շարված կանգնում են իշխան Բիս-

մարի պալատի առաջ, որի մէջ ինչպէս յայտնի է ժողովում է կօնգրէսը—Այս բոլոր նկարագրութիւնները շատ նման են Բօսնիայի դրութեան նկարագրիւններին, և նրանցից կարելի է եզրակացնել թէ որոնք են գոժ վիճակներով և առհասարակ կօնգրէսի զործուհետեւութեամբ, որոնք ոչ Գրաֆ Անդրաշիին միշտ ներկայացնում են ամենազեղեցիկ տրամադրութեան մէջ, նա ժողովուրդ մտեւում է Բիսմարկի պալատին և աջ ու ձախ ուղղուի է տալիս: Պ. Վալդինգտօն օրինակի համար այս ինչ նիտոտերը գաղով մարկի զը Սէն-Վալլէի հետ միասին էր և շատ ուրախ խօսում էին իրար հետ և ժիծաղում... և այդ սրա նման նկարագրութիւններ: Միայն թիւրքիայի ներկայացուցիչները մասին միշտ ասվում է՝ «կատարեալ անտարբերութիւն նշարվում էր նրանց երեսները վրա» կամ «կարաթէօօրիփաչա և Մէհմէտ-Ալի-փաչա շատ ծանր դէմքեր էին ցոյց տալիս», իսկ այսօր ասվում էր՝ «անշաջող եղանակը ամենքի վրա ազդել էր, ոչ Անդրաշի, ոչ պ. Վալդինգտօն իրանց սովորական ուրախ երեսներ էին ցոյց տալիս, միայն թիւրքիայի պատգամաւորները այլ ևս իրանց սովորական անտարբերութեան մէջ ընկզմված էին, կարաթէօօրիփաչան վրդովված էր երևում և սաստիկ շարժումներով էր խօսում, իսկ Մէհմէտ-Ալի-փաչան իր ֆէսը ճակատի վերայից էր հեռացնում:»

Այս օրինակները բերել, որ ցոյց տամ թէ համեմատաբար էլի շատ սակաւ նիւթ յայտնի վիճակով կօնգրէսից լրագրութեանը, նա արտաքին երկայնութիւն է զբաղվում և գոժ է որ գոնէ այսքան կարող է հաղորդել:

Եկող շաբաթը երեկ կը վերջանան բոլոր հարցերը եւրօպական թիւրքիայի վերաբերեալ և յոյս կայ որ պիտի խօսեն ֆոքր-Ասիայի մասին:

Ա. Արծրունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵ

—Կ. Պօլսից գրում են մեզ որ հայոց ազգային ժողովի անդամ, պ. Ստեփան Գափագեան մասնաւոր հրահանգներով ուղարկվել է Բերլին: Նամակագիրը յայտնում է նաև թէ Հ. կղեմէս վ. Սեպիւրեան որ կիլիկիայի կողմեր արած հնարկողական հետազոտութիւններով առնանի է եղած, Կ. Պօլսից ճանապարհորդել է դէպի Բաղդադ, այն կողմերի հուսկիւնները քննելու համար, բայց դժբաղդապէս Տիգրանա կերտ (Կարաբէկի) քաղաքում հիւանդանալով վախճանվել է:

—Կ. Պօլսի «Չէրիգէլի Հավատի» թիւրքաց լրագիրը գրում է թէ օսմանեան հաւատարմատարների հետ գտնվում են քարտուղարութեան պաշտօնով արտաքին գործերի միմիտրութեան պաշտօնատարներից Օտեան-Խաչիկ-Էֆէնդի, Գարազաշեան Կարապետ-Էֆէնդի և Աթաբէկ:

—Կ. Պօլսի լրագիրները հրատարակում են թէ Նիդարտոն լիկտովին կապուս-Քէհեսարի (գործա-կատար) Երամբան Աբրահամ-փաչան և արտաքին գործերի նախկին միմիտրոս հայազգի Նուբար-փաչան Կ. Պօլսի կը գան մօտ օրերում:

—Կ. Պօլսի «Ղոյս» շաբաթաթիւթը գրում է թէ յոյները երուսաղեմի ս. Յարութիւն տաճարի մէջ, Չատիկ թաթիսման երեկոյին, օգոտ քաղելով հայ ուխտաւորների սակաւութեանց, բարբարոսաբար յարձակվել են հայոց միաբան վարդապետների վրա և նրանց սաստիկ հարուստեցնել վիրաւորել են մի քանիսին:

—Յագուզայից յունիսի 23-ին հեռագրում են եւրօպական լրագիրներին հետեւեալ: «Երէկ ալբանիացի երեկոյնից շատեր, քրիստոնեաներից և մասնաւորապէս իսլամ, հեռագրով մի յիշատակագիր ուղարկեցին կօնգրէսին: Այդ գրութեան մէջ ինորում են Ալբանիայի ինքնավարութիւնը Բ. Կրան գերիշխանութեան ներքեւ երկու հազար նիզամ (կանոնաւոր) զօրքերի մի խումբ որ գալիս էր Կ. Պօլսից, շոգենաւից զուրս եկաւ Կրաբացո: Չերնօօրցիները կնկարծանում են Պօղոբիցայի մօտ:

—Լօնդօնից յունիսի 24-ին հեռագրում են հետեւեալը: «Հանուդէրի վախճանած Գեորգ Թաւադրի զապուր այսօր առաւօտեան 11 ժամին զրեցին վիմուսօրի արքունական եկեղեցում Կերկայ էին հանդէսին Վիկտորիա թագուհին, Ուէլի իշխանը, Էօօթիլ իշխանը և Բէտարիս իշխանուհին, ինչպէս նաև Անգլիայի արքայական զեղաւորանի անդամներից մի քանիսը:»

—«Ostdeutsche Zeitung» լրագիրը հրատարակում է Օստրօվոյից յունիսի 23-ին ստացած հետեւեալ հեռագրը: «Երէկ կալիւում կաթիլինե-

րի թափումը պտղած ժամանակ անկարողութիւններ եղան հրէաների և բողոքականների դէմ: Հրէաների սինագոգան (եկեղեցի) և շատ խանութներ քանդվեցան: 13 մարդ սպանվեցան: Կառավարութիւնը ստիպվեցաւ միջամտել գործերով:

—Կէմբրիջի զուքը Մայտայից հեռագրել է Հնդկաստանի փոխարքային հետեւեալը: «Այստեղ հաւաքված հնդկական զօրքերի դրութիւնը քննելուց յետոյ, ուրախութեամբ յայտնում եմ ձեզ որ բոլոր զօրքերը շատ լաւ դրութեան մէջ են: Իրանց առողջութիւնը լաւ է: Այնպէս են վարվում որ ոչ ոք նրանց չի մեղադրի:»

—«Голосъ» լրագրին Բերլինից հեռագրում են յունիսի 19-ից (յուլիսի 1-ից) հետեւեալը: «Կօնգրէսի այսօրվայ նիտուտը լսեցին Բրատիւսո և Կօզալնիչանօ րուսինական զեղեզատների խնդիրը: Կօզալնիչանօ երկար ժամանակ ճառախօսեց, բացատրելով և պարզելով րուսինայի պահանջները: Ինչպէս լսվում է, «րուսինայի պահանջը Բեսարաբիայի վերաբերութեամբ չի ընդունվի և ոչինչ հետեւանք չի ունենայ: Գօբուշան րուսինայի զիջանելու խնդիրը դեռ ևս բանակցութիւններ է կարօտ, որպէս զի սահմանները աւելի ճիշդ կերպով որոշվին:»

—«Голосъ» լրագրին հեռագրում են Բերլինից հետեւեալը: «Գերմանական թագածառանգից հաւատարմատարների տուած ճաչի ժամանակ ներկայ էին և հայոց զեղեզատները: Թիւրքաց լրագիրները մեծ յարգանքով էին վերաբերվում դէպի հայոց եպիսկոպոսները և նրանցից մինը, Սաաղուլաբ-բէյ, որ Սաւա-Ստեֆանօի դաշնադրութեան ստորագրելու ժամանակ հեղուկ էր նոյն իսկ հայոց ազգութեան գոյութիւնը, պարծեցաւ հայոց եպիսկոպոսներից մինի առջև, թէ ինքն էլ հայոց ծագումից է: Սաաղուլաբ-բէյ ծնված է Էրզրումի մէջ:»

—Նոյն լրագրին գրում են որ յունիսի 19-ին Բերլինի թիւրքաց գեսպանը ճաչ տուեց, որին ներկայ էին կօնգրէսի մի քանի հաւատարմատարները:

ԽԱՌՆ ԼՈՒԻՐԵ

Ֆրանսիական լրագիրները յունիսի 29-ից հաղորդում են որ Ժան-Գալ Բոսօ զարեղարձը շուտով պիտի ստնվի: Այդ դարեղարձի ասնը կատարելու համար մասնաժողով կազմվեցաւ սենատի և ազգային ժողովի անդամներից, քաղաքային խորհրդի, ինստիտուտի, զօրքի, մասնաւոր և ուսումնարանների ներկայացուցիչներից:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

Ս. ՊԵՏԵՐՑԻՆԻՔ, 28 յունիսի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 Կ., երկրորդ 96 ր. 25 Կ., երրորդ 96 ր. 5 Կ., չորրորդ 96 ր. 5 Կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսերը արժէ 245 ր., երկրորդ 242 ր. 75 Կ., արևելեան 94 ր. 75 Կ., սակին 7 ր. 75 Կ.: Տրամադրութիւնը շատ ամուր է:

ԲԵՐԼԻՆ, 28 յունիսի (9 յուլիսի): Իտալիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները սաստիկ զարմացած են այն համաձայնութեան մասին, որ կայացած է Անգլիայի և Թիւրքիայի մէջ կիպրոսի վերաբերութեամբ: Կարծում են որ անգլո-թիւրքաց համաձայնութիւնը հրատարակված է միմիայն անգլիական հասարակական կարծիքին բաւականութիւն տալու համար:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆՈՒ ԳՏԵՎՈՂ ԱՆԳ-
ԳԼԻՄԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ծախում են ՍՊԻՏԱԿ
ԲՈՒՄԱՉԵՑԱՆ զինուորականների շարքերի համար
արշինը 1 ր. և բարձր, ՈՒՆԵՍԻ շարքերի հա-
մար և ՊԱՐՈՒՍԻՆ արշինը 50 Կ., ՓՕՇԻՆԵՐ
տարածությունից հիւանդութիւնների դէմ և ՍԻՆՍՅԻ
ԲԱՍՏԱՄԵՆ (ԽՂ) 1 1/2 ր., ՍԱՊՈՒՆ 10 Կ. և
բարձր, ՅԻՏԲԱԿ մարտիկի 1 1/2 ր., ԲԻՍՎԱԿԻՏ-
ՆԵՐ 1 ր., և բարձր, ՖԻԼՏՐՆԵՐ 4-40 ր., ԵՐ-
կաթեայ մանձակայանը 5 ր. և բարձր, սղոցներ
50 Կ. և բարձր, ճանապարհի ԱՄԱՆՆԵՐ դիւթիւնը
3 ր., ԳԻՊՆԵՐ արդը 15 Կ. և բարձր, ԲԵՎՈՂ-
ՎԵՐՆԵՐ 6 ր. և բարձր 1000 ասեղ 80 կոպէկ,
արական ՓԱՄԲԵՐ 40 ր. և բարձր, ԻՒՍՎԱՆ-
ՆԵՐ 70 ր. և բարձր, ծ կոցներ, մահկանացիներ,
երկանների շարքեր 4 ր. բարձր, հիւանդի վե-
րաբերներ 12 ր. և ա. Ի, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ 2 ր., կողպէք Ի և սղոցներ 10 Կ.
և բարձր, բով, կոնեակ, պորտ-վէյն, խերես և
անգլիական օղի 1 1/2 ր., ՊԱՆԻՐ շեստեր 60 Կ.
և բարձր, Շուտով կը լինի լաւ թէյ 1 ր. ֆունտը:

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆՈՒ ԳՏԵՎՈՂ ԱՆԳ-
ԼԻՄԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ Ծախում են ԿԱՐՈ-
ԼԵԱՆ հեղուկ և փօշի տարածությունից հիւան-
դութիւնների դէմ 1 1/2 ր., ՍԻՆՍՅԻ ԻՒՂ,
1 1/4 ր., ցետրատ մանկեղայի 2 ր., ԲՕՄ,
ԿՕՆԻՍՏԱՆ, ՊՕՐՏՎԵՑՆ, ԽԵՐԵՍ և անգլիական
օղի 1 1/2 ր., ճանապարհի ամաններ գիւթիւնը
3 ր., թէյի գրայներ (չին սեւանու) 1 1/2
րուբլ և բարձր, ճանապարհի դանակներ 80
Կ., ճանապարհի Ֆիլտրներ 4 Կ., մատա-
ներ հատը 1 կոպ., երկաթի գրիչներ 18
հատը 5 Կ., ասեղներ 1000 հատը 80 Կ.,
ճածկոցներ, մանկական շարքեր և չը թրջվող
վերաբերներ 4 րուբլ և բարձր, գլխարկներ
և ժիլետներ 75 Կ. և բարձր, կտաւ 10 ր.
և բարձր, արիւս 1 ր. և բարձր, ՊԱՐՈՒՍԻՆ
60 Կ. և բարձր, բամբակի 1 ր. արշինը,
շղթաներ (Աբխազիայի սոխոց) 50 Կ. մինչև 3
ր.: Մի և նոյն խանութում շուտով կը ստաց-
վին ՄԱՃԱՎԱՆՆԵՐ 6 ր. և բարձր, բիսկվիտ-
ներ, մեծ ֆիլտրներ և ՎԵՐՎԱՆԳՆԵՑՆՈՂ,
անուանված մի գեղը, և այլն:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՍՏԱՆՈՑՈՒՄ
(ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵՆՈՒ)
ստացվել են մեծ քանակութեամբ աշխարհադրական պիտոյքներ՝
ա. Հասարակ երկրադրական դնադրան մեծութեան 50 Կ. մինչև 3 ր. 50 Կ.
բ. Երկրադրական պիտոյք կիսամիջօրեականով . . . 1 ր. 20 Կ. — 5 ր. 50 Կ.
գ. Երկրագ. պիտոյք ամբողջ միջօրեականով հա-
սարակածով և կողմնացոյցով 9 ր. — 20 ր. և ասեղ
դ. Տէլուրի (երկրի և նորա շրջ. արեգակի շուրջ) . 18 ր. և ասեղ
ե. Աշխարհագրակ. աստղաներ 55 Կ. — 5 ր.
զ. Մայր ցամաքների և Կովկասի քարտէզները բա-
թանի վրա կպցրած և առանց դրան, պատմական, նը-
կարական, կենդանաբանական և բուսաբանական առ-
լաններ, ձեռնարկներ, դասագրքեր և այլն: Պատուէրները
կատարվում են ճիշդ և արագ:

Պատրաստ է տպագրութեան
համար
ԻՆՔՆՈՒՍՈՅՑ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Հայերէն լեզուի մասն ա.
Յորինաց եղել է վարժապետ Մեծատունեանց:
Բաժանորդ կարել է գրվել Զ. Գրիգո-
րեանցի գրախանութում: Բաժանորդագրու-
թեան գինը 50 կոպէկ է, տպագրվելուց յե-
տայ գինը 1 րուբլ:
1-2 3-3

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
յայտնում է քաղաքի բնակիչներին, որ զնա-
հասական հարկի 1875 թ. երկրորդ կեսի
պահասորդների հաւաքելը Կուսնայի վճարի հա-
մեմատ յանձնած է նահանգական քարտու-
ղար Ալէքսանդր Միխայլովիչ Զարարովին:
Քաղաքային վարչութիւնը հրահրում է կա-
լաւածատերերին, որոնք պէտք է վճարեն
պահասորդներ, յանձնեն փողը Զարարովին
և նրանից տպած ապահովագրիչներ ստանան:
Հակառակ դէպքում պ. Զարարովին իրաւունք
է սուած անկանոն հարկատուների հետ վար-
վել քաղաքային կանոնադր. 131 յօդ. հա-
մեմատ: Թիֆլիսի գլխավոր պ. Պոլեյմէյստե-
րին յայտնած է, որ նա գործակցէ պ. Զա-
րարովին հարկավոր դէպքում: Այն կա-
լաւածների ցուցակը, որոնք պէտք է պակա-
սորդը վճարեն, պակասորդների քանակու-
թիւնը իւրաքանչիւր կալաւածից և տուգանք-
ները վարչութեան անդամի ստորագրութեամբ
յանձնված են պ. Զարարովին: Պ. Զարարով
փողի կրնուի իր գրասենյակում, որ գը-
տնվում է քաղաքային վարչութեան տան
մէջ, առաւօտեան 9-12 ժամը: Պ. Զարա-
րովի բացակայութեան ժամանակ փողը կա-
րել է մտնել վարչութեան գանձարանը:
1-3

Ալէքսանդրապոլու հայոց վիճակային հո-
գևոր և Արղութեան օրիորդաց ուսումնարան-
ներում հարկավոր են ուսուցիչներ յետազայ
առարկանների համար. 1, ուսուց լեզուի (եր-
կու ուսուցիչ) 2, հայոց լեզուի (երկու ու-
սուցիչ) 3, Պատմութեան և Աշխարհագրու-
թեան. 4, բնական գիտութեանց (սկզբունք)
5, Մատմատիկայի (թւարանութիւն, երկրա-
չափութիւն և սկզբունք աղբերայի) և 6,
Արղութեան ուսումնարանի համար մի վար-
ժուհի Նւրաբանութեան նոյն և վերակա-
ցուհի: Եւրաբանութիւն ուսուցիչ կունենայ շա-
բաթական մինչև 24 դաս:
Գրեթէ բոլոր առարկանների դասատու-
թիւնը պէտք է լինի երկրորդ ուսումնարան-
ների բարձր դասատուներով: (Տղայոց ուսումն
նարանը բայի պատրաստականներից՝ ունի
չորս դասատու, իսկ օրիորդացը՝ երկու մտա-
դրութիւն կայ բանալ և երրորդը): Դասա-
տուութիւնները պէտք է սկսվին անշուշտ
օգոստոսի 15-ին:
Ցանկացող ուսուցիչներից կը խնդրվէ ա-
ռանց ուշացնելու յայտնել իրանց պայմանները
հետեւեայ հայտնով. — Ալեքսանդրոպոլ. Թո-
պեպետարն Բարյակաճ Դուխոնո (իւր
Արղուցեան Դճիւնչո) Սիւլիսի.

ПОЛУГОДОВАЯ ПОДПИСКА
НА ГАЗЕТУ
„ОБЗОРЪ“
(СЪ 1-ГО ПОЛЯ ПО 31-Е ДЕКАВРЯ 1878 Г.)
принимается въ конторѣ «Обзора» (Головинскій проспектъ,
д. № 7), за плату 8 РУБ. СЕР. съ пересылкою или дос-
тавкою. Иногородные адресуютъ: въ Тифлисъ, въ редакцію
газеты «ОБЗОРЪ». Желаютіе получить подписную кви-
танцію прилагаютъ гербовую марку въ 5 коп.
На другіе сроки условия подписки остаются прежнія: на
годъ — 15 руб., на 3 мѣсяца — 4 р. 25 к. и на мѣсяць 1 р.
50 к. Желаютіе подписаться на цѣлый годъ съ разсрочкою
вносятъ по пяти рублей къ началу первыхъ трехъ четвер-
тей подписнаго года.
2-3

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՍՏԱՆՈՑ		ՀԵՎԵՎԱՆՈՑ		ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՒՂԻ		ՓՕՍՏ		ԲԺՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐ	
Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.	Բ.	Կ.
Ուկրաին (պորտուգալական)	8 30	Կովկասի և Ան- դրկովկասի քա- ղաքները	1	Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րուբլ առաւօտեան: Մինչև Միխայլով օվո (խառն գնացքը) երկուսուս 5 ժամ. 18 րուբլ:	9	Ամեն տեսակ թէ նա- մակներ, թէ լրագրիչներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից չեւոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասա- րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3-7 երկուսուս:	Հիւանդների ընդունելու- թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ: Երկուսուս արթի վերջի- չէվ և Գորաբիլի ներքին հիւանդութիւններ, Գուշա- րեանց վերաբուժական և ականջի հիւանդութիւններ: Երեքշաբթի. վերջիչէվ ներքին 5. Բէյն աչքի 5. 9-11 ժամ. Ա. Բախու- տով կանանց, երեխաների 5. և մանկաբարձութեան: Զորեքշաբթի. վերջիչէվ ներքին 5. Բակտ կրծքային և ջղային: Հինգշաբթի. վերջիչէվ ներքին 5. Գալլուս- ակի կանանց և մանկա- բարձութեան, 9-10 ժամ, Բակտ վնասական և կա- շու 5. Օրբիտտ առանա- ցական:	Ներքին և արտաքին Պատմական և Երկրա- չափային բոլոր երկր- ները նամակը արժէ Ռուսաստան և Եւ- րոպայի բոլոր երկր- ները նամակը արժէ Ամերիկա Պարսկաստան Հնդկաստան Եգիպտոս	Ներքին և արտաքին Պատմական և Երկրա- չափային բոլոր երկր- ները նամակը արժէ Ռուսաստան և Եւ- րոպայի բոլոր երկր- ները նամակը արժէ Ամերիկա Պարսկաստան Հնդկաստան Եգիպտոս	Ներքին և արտաքին Պատմական և Երկրա- չափային բոլոր երկր- ները նամակը արժէ Ռուսաստան և Եւ- րոպայի բոլոր երկր- ները նամակը արժէ Ամերիկա Պարսկաստան Հնդկաստան Եգիպտոս	Ներքին և արտաքին Պատմական և Երկրա- չափային բոլոր երկր- ները նամակը արժէ Ռուսաստան և Եւ- րոպայի բոլոր երկր- ները նամակը արժէ Ամերիկա Պարսկաստան Հնդկաստան Եգիպտոս